ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՏՊ-1032-11002/22-ԼԱ

Քաղ. Երևան 27 01 2022թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Աննա Եղիազարյանը, ի դեմս Հայկական Կարմիր Խաչի ընկերության (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թ. դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «1032 «Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց» ծրագրի 11002 «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ գումարից մինչև 4 102 920 (չորս միլիոն հարյուր երկու հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում 1-ում: Ծրագիրն իրականացվում է Լոռու մարզի Ալավերդի համայնքում՝ ամսական 45 տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց համար:

1.3. Պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ պայմանագրի 9.7 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3 նախարարության համաձայնությունը ստանալու դեպքում՝ կատարել ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների հոդվածային վերաբաշխում՝ բայց ոչ ավել, քան ֆինանսական առաջարկի ծախսային յուրաքանչյուր հոդվածի 10%-ի չափով:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 20-ը, պետական մարմին ներկայացնել

հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն սույն պայմանագրի N5 հավելվածի և հաշվետվություններ համաձայն սույն պայմանագրի N2 և N3 հավելվածների, ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ (այդ թվում եռամսյակային հաշվետվություն) մինչև հաշվետու ժամանակահատվածի հաջորդ ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա և 4-րդ եռամսյակի համար մինչև դեկտեմբերի 20-ը: Ծրագրի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.8. Սույն պայմանագրի 4.1-րդ կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի: «Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն»:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության և/կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից բացառապես նախօրոք մշակված հարցաթերթի միջոցով և/կամ ըստ անհրաժեշտության՝ առանց հարցաթերթի:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է կատարվող գործողությունների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով գործողություններին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կապ հաստատելով ծրագրի շահառուների հետ՝ նրանց շրջանում հարցում և եզրակացություն տալու նպատակով՝ առանց կազմակերպությանը տեղեկացնելու կամ ներգրավելու այս գործընթացում:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.6. Եռամսյակային հաշվետվությունների ներկայացված և համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա բոլոր արդյունքային ցուցանիշների կատարողականը գնահատվում

է համապատասխան վարչության կողմից՝ ըստ անհրաժեշտության ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչության հետ համատեղ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատրման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 5) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 4) նախատեսված ամիսներին, ըստ պայմանագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների կատարման արդյունքի:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

77.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության

հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը (դրամաշնորհային ծրագիրը՝ պետք է բխի միջոցառումների նկարագրի պահանջներից և մեթոդական ցուցումներից) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 6):

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4. կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ *https://www.mlsa.am/?cat=142* կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

9.5. Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.6. Պայմանագրով ստանձնած պարտավորությունը դադարում է կատարման անհնարինությամբ, եթե դա առաջացել է այնպիսի հանգամանքից, որի համար կողմերից որևէ մեկը պատասխանատու չէ՝ պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում գրավոր ծանուցելով մյուս կողմին: Այդ դեպքում կողմերը իրավունք չունեն միմյանցից պահանջելու պարտավորության կատարում: Սույն կետում նշված պայմանագրի կատարման անհնարինության մասին ողջամիտ ժամկետում մյուս կողմին չծանուցելու դեպքում՝ չծանուցող

Կողմը պարտավորվում է մյուս կողմին վճարել տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գնի 1 %-ի չափով:

9.7. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.8. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.9. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Ք.Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011016772 ՀՎՀՀ 01506515 Նախարարության գլխավոր քարտուղար՝ Ս.Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ.	Կազմակերպություն Հայկական Կարմիր Խաչի ընկերություն Ք.Երևան, Պարոնյան 21/1 «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Հ/Հ 11500073298832 ՀՎՀՀ 00006023 Գործադիր տնօրեն՝ Ա.Եղիազարյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1
2022թ. Հունիսի 27 -ին
Կնքված ՊԴՏՊ-1032-11002/22-ԼԱ պայմանագրի

«Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» ծրագրի

Համառոտագիր

Խնամքը դիտարկվում է որպես տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձին՝ ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններ ապահովելու կամ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց իրենց հարազատ սոցիալական միջավայրում հնարավորինս երկար պահելու անհրաժեշտ օգնություն: ՀԿԽԸ կողմից կիրառվող մոդելի շրջանակներում խնամքը կտրամադրվի անմիջապես խնամվողի տանը որպես համալիր սոցիալ-առողջապահական ծառայությունների համախումբ՝ նպատակ ունենալով ապահովել որակյալ, անհատական կարիքներին համապատասխան, արժանապատիվ աջակցություն, որը կնպաստի խնամվողի սոցիալ-առողջական վիճակի բարելավմանը:

Խնամվողները կընդգրկվեն խնամքի ծառայության մեջ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համաձայն համապատասխանության չափանիշների, ինչպես նաև ՀԿԽԸ կողմից կիրառվող շահառույի վիճակի գնահատման ձևաչափի:

Խնամվողների խնամքը կիրականացվի վերջիններիս տներում, խնամք տրամադրող անձնակազմի կողմից՝ համաձայն նրանց անհատական խնամքի ծրագրերի, որոնք կմշակվեն խնամվողների անհատական կարիքների գնահատման հիման վրա, արդյունքում՝ խնամվողներին լիովին կտրամադրվեն իրենց անհատական ծրագրերում սահմանված ծառայությունները:

Խնամք տրամադրող աշխատակիցները կպահպանեն խնամվողի կարիքների գնահատման, անհատական ծրագրերի վերանայման, աշխատանքի իրականացման համար սահմանված ընթացակարգը, նաև կառաջնորդվեն «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սոցիալական աջակցության հիմնական սկզբունքներով: Խնամվողները նույնպես կմասնակցեն իրենց կարիքների գնահատմանը, վերագնահատմանը և սոցիալական ծրագրերի վերանայմանը:

Կազմակերպությունը կիրականացնի խնամվողներին տրամադրվող ծառայությունների մասնակցային մշտադիտարկում՝ համաձայն մշտադիտարկման պլանի, սահմանված ընթացակարգի:

Ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում: Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ ծրագիրը:

Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները հասարակության համար կարևոր ու արդիական են և պահանջում են անհրաժեշտ միջամտություն՝ ուղղված նրանց կյանքի որակի բարելավմանը: Բնակչության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը նպատակաուղղված է տարեցների առողջության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, սակայն հայտնի սոցիալ-տնտեսական, հասարակական զարգացումների ազդեցությամբ, նաև պահանջվող ռեսուրսների սակավության պատճառով, դրանք չեն ապահովում անհրաժեշտ արդյունքը:

Տարեցների բարեկեցության և առողջության համար կան մի շարք կարևոր ասպեկտներ, որոնք կարևոր են կյանքի արժանապատիվ որակ ապահովելու համար (ներառյալ առողջությունը, սոցիալական խնամքը, սոցիալական շփումները և այլն): Հայաստանում տարեցները տնտեսապես առավել խոցելի են. թեև նրանք կենսաթոշակ են ստանում, սակայն դա բավարար չէ հիմնական ծախսերը հոգալու համար: Տարեցների առողջական վիճակի վատթարացումը խորը խնդիրներ է ստեղծում ընտանիքում, քանի որ տարեց մարդիկ լիովին կախված են դառնում ընտանիքի անդամներից, մինչդեռ կարիք ունեն մասնագիտացված խնամքի:

Ծրագրի իրականացման արդյունքում զգալիորեն կբարելավվի տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը՝ տնային պայմաններում ինտեգրացված առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիության միջոցով: **Կազմակերպության փորձառությունը**

Ներկայացրեք կազմակերպության առաքելությունը և նպատակները, ինչպես նաև նշված ոլորտում իրականացված ծրագրերը (ժամանակահատված, դրամաշնորհատու կազմակերպություն, բյուջե, նպատակ, արդյունքներ):

Արդեն մեկ դարից ավել է, ինչ Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացնում է իր առաքելությունը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ համախմբելով մարդասիրության ուժը՝ ազգաբնակչության խոցելիությունը նվազեցնելու նպատակի շուրջ:

ՀԿԽԸ առաքելությունն է նվազեցնել բնակչության խոցելիությունը՝ մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ, նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են բնակչության խոցելիության պատճառ դառնալ, ցուցաբերել անհրաժեշտ օգնություն՝ սատարելով սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում գտնվող մարդկանց:

Ազգային ընկերությունը՝ հանդիսանալով օժանդակ կառույց կառավարությանը մարդասիրական ոլորտում, ակտիվ և լայնածավալ գործունեություն է իրականացնում հետևյալ ուղղություններով՝ սոցիալ-առողջապահություն, առաջին օգնություն, աղետների կառավարում, որոնում, երիտասարդության հիմնախնդիրներին ուղղված գործունեություն, միջազգային գործունեություն, Կարմիր խաչի հիմնարար սկզբունքների

և մարդասիրական արժեքների տարածում: Գործունեությունն իրականացվում է ընկերության 11 մարզային, 1 տարածքային և 52 ճյուղային կազմակերպությունների միջոցով:

ՀԿԽԸ հիմնական շահառու խմբերն են՝

- Տարեցներ և հաշմանդամություն ունեցող անձինք
- Քաղաքային և գյուղական խոցելի համայնքների բնակիչներ
- Երիտասարդներ, ուսանողներ, դպրոցականներ և երեխաներ
- Փախստականներ, ապաստան հայցողներ, Արցախից և Սիրիայից տեղահանված անձինք
- Տուբերկուլյոզով հիվանդներ
- ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ և ՄԻԱՎ-ի առումով ռիսկի խմբեր
- Անհայտ կորածների ընտանիքներ

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, սոցիալ-առողջապահական ուղղության շրջանակներում նպատակ ունենալով աջակցել պետական համակարգին՝ նվազեցնելու սոցիալապես անապահով մարդկանց խոցելիությունը և բարելավելու համայնքների բնակչության առողջական վիճակը, մշտապես ծրագրեր է իրականացրել այս ուղղությամբ:

ՀԿԽԸ-ն երկար տարիների փորձ ունի տնային խնամքի իրականացման ոլորտում: Դեռևս խորհրդային տարիներին իրականցվել է «Գթության ծառայություն» ծրագիրը, որի շրջանակներում հանրապետության ամբողջ տարածքում աշխատել են բուժքույրեր և սոց. քույրեր (160), որոնք իրականացրել են միայնակ տարեցների տնային խնամք: Տարեցներին տրամադրվել է նաև անվճար դեղորայք, ինչպես նաև, պարբերաբար, սոցիալական աջակցություն: Ծրագրում ներգրավվել են նաև 1988թ.Ադրբեջանից գաղթած միայնակ տարեցները:

2000 թվականից մինչև 2008 թվականը ծրագիրը շարունակվել է աղետի գոտում և սահմանամերձ համայնքներում: Այնուհետև տնային խնամքի ծառայությունը սահմանամերձ համայնքների անժառանգ միայնակ անկողնային տարեցների, Երևանի և Կոտայքի հանրակացարաններում բնակվող փախստական միայնակ ծերերի համար շարունակվել է կամավորների միջոցով: Տարեկան կտրվածքով ներգրավված է մոտ 500-600 շահառու, որոնց տրամադրվում է սոցիալ-հոգեբանական աջակցություն:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, սոցիալ-առողջապահական ուղղության շրջանակներում նպատակ ունենալով աջակցել պետական համակարգին՝ նվազեցնելու սոցիալապես անապահով մարդկանց խոցելիությունը և բարելավելու համայնքների բնակչության առողջական վիճակը, 2016 թվականից սկսել է իրականացնել միայնակ տարեցների աջակցության նոր ծրագիր, որն իրենից ներկայացնում է տարեցների խնամքի նոր մոդել:

Տարեցների խնամքը իրականացվում է վերջիններիս տներում, խնամք տրամադրող անձնակազմի կողմից՝(ավագ բուժքույր, բուժքույրեր և տնային խնամողներ) համաձայն նրանց անհատական խնամքի պլանի, որոնք մշակվում են տարեցների և հաշմանդամություն ունեցողների անհատական կարիքների գնահատման հիման վրա, արդյունքում՝ տրամադրվում են իրենց անհատական ծրագրերում սահմանված ծառայությունները: Շահառույի կարիքները հիմնականում դիտարկվում են երկու տեսանկյունից՝ առողջական գործոնների (օրինակ՝ բժշկական միջամտություն պահանջող) և սոցիալական գործոնների (օրինակ՝ կյանքի համար կենսական անհրաժեշտություն ունեցող համապատասխան պայմանների առկայություն և կենսագործունեության ապահովման տարբեր տեսակի հմտությունների պահպանվածության աստիճան):

Յուրաքանչյուր խնամվողի դեպքում խնամք տրամադրող անձնակազմը ունի տունայցերի ժամանակացույց, որը կազմվում է խնամառուի կարիքների գնահատման արդյունքում և հաստատվում է՝ խնամքի ծառայության համակարգողի կողմից: Յուրաքանչյուր այցի ժամանակ խնամք տրամադրող մասնագետի կողմից մատուցվող խնամքի ծառայությունների մասին տեղեկատվությունը լրացվում է խնամքի տրամադրման համար համապատասխան ձևաթղթում: Խնամվողների անձնական գործերում, համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, կպահպանվեն խնամքի տրամադրման մասին փաստաթղթերը:

Ծրագրի շրջանակներում օգտագործվում է էլեկտրոնային շտեմարան, որում գրանցվում են շահառուների տվյալները և ցուցաբերված աջակցությունը: Անձնական տվյալների գաղտնիությունը պահպանվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական կարգավորումներին համապատասխան:

Ծրագրի համակարգողը իրականացնում է խնամվողներին տրամադրվող ծառայությունների մասնակցային մշտադիտարկում՝ համաձայն մշտադիտարկման պլանի, սահմանված ընթացակարգի, մոնիթորինգի և գնահատման հատուկ ձևաթղթերի: Գնահատման արդյունքները, որոնցից առավել կարևոր նշանակություն ունի շահառուների կյանքի որակի բարձրացման մասին վկայող ցուցանիշը, առանցքային գործոն են հանդիսանում տրամադրվող ծառայությունների որակի բարելավմանն ուղղված քայլեր ձեռնարկելիս՝ բարձորակ խնամքի տրամադրումը երաշխավորելու համար:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Համառոտ կերպով նկարագրել՝ որն է ծրագրի նպատակը և ինչ արդյունքներ են ակնկալվում ծրագրի ավարտին:

Ծրագրի նպատակն է տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամքի իրականացում, որը կհամապատասխանի նրանց հատուկ և անհատական կարիքներին և կնպաստի կյանքի որակի բարձրացմանը:
Շահառուների խնամքը իր մեջ կընդգրկի հետևյալ մասնավոր գործառույթները՝

1) Առաջնային բժշկական օգնությունը կիրականացվի բուժքույրերի կողմից (բուժող բժշկի հետ սերտ համագործակցությամբ) և նախատեսում է բժշկի նշանակմամբ դեղերի և բժշկական նշանակության նյութերի ստացման գործում աջակցություն, ներարկումները, վերքերի մշակումը, զարկերակային ճնշման որոշումը, գլյուկոմետրիան, ինչպես նաև բժշկի կողմից նշանակված այլ միջամտություններ և չափումներ:
2) Կենցաղային սպասարկումը կհանդիսանա շահառուների կյանքի որակի բարձրացմանը ուղղված միջոցառումների անբաժանելի մասը: Հիգիենայի պահպանումը, տան մաքրումը, սննդի պատրաստումը, կերակրումը, լվացքը և կենցաղային մի շարք այլ գործառույթներ կիրականացվեն տնային խնամողների թիմի կողմից:
3) Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրում և ուղղորդում՝ սոցիալական աշխատողի և ավագ բուժքրոջ կողմից շահառուները կամ նրանց ներկայացուցիչները կստանան խորհրդատվական օգնություն սոցիալական խնդիրների լուծման նպատակով, իրավիճակին համարժեք սոցիալական ծառայություններից օրենքով սահմանված կարգով օգտվելու համար, այդ թվում՝ աջակցություն բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպման առումով և խնամվողի իրավունքների և դրանց իրականացման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:
4) Ծրագրի շրջանակներում շահառուները կապահովվեն վերականգնողական պարագաներով (ձեռնափայտ, քայլակ, սայլակ, հակապարկելախոցային ներքնակներ և բարձեր):
5) Տնային խնամքի մեջ ներգրավված անձնակազմը անցել է կինեսթետիկայի դասընթացներ, ինչը կարևոր է շարժողական գործունեության սահմանափակումներով խնամառուների հետ աշխատելիս, իսկ էրգոթերապիայի սկզբունքների կիրառումը կբարձրացնի խնամվողների ինքնուրյունությունը առօրյա գործողությունները կատարելու ընթացքում:
6) Հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրման անհրաժեշտության դեպքում ՀԿԽԸ-ն աշխատակիցները կօգնեն շահառուներին ուղեգրող բուժհիմնարկի մասնագետի խորհրդատվության կազմակերպման և տեղափոխության գործընթացում: Արդյունքում՝ տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավում:

Հ/Հ	Գործողություն	Պատասխան ատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Սոցիալ-առողջապահական խնամքի տրամադրում - Խնամքը տրամադրվում է խնամք իրականացնող անձնակազմի միջոցով կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա՝ բուժքույրերի, միջոցով և ներառում է բժշկի նշանակմամբ դեղերի և բժշկական նշանակության նյութերի ստացման գործում աջակցություն, ներարկումները, վեքերի մշակումը, զարկերակային ճնշման որոշումը, արյան մեջ գլյուկոզայի քանակի վերահսկում և այլն:	Բուժքույրեր	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
2	Կենցաղային օգնություն և սպասարկում- հիգիենայի պահպանում, տան մաքրում, սննդի պատրաստում, կերակրում, լվացք և կենցաղային մի շարք այլ գործառույթներ կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա	Տնային խնամողներ	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
3	Կամավորների այցելություններ - Ընկերակցում, զրույց, ընթերցանություն, գնումների իրականացում, աջակցություն մանր կենցաղային հարցերում,	Կամավորներ	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x

	այլ՝ կարիքների գնահատման և անհատական խնամքի պլանի հիման վրա													
4	Սոցիալական աշխատողի այցելություն՝ խորհրդատվություն, գնահատում, ուղղորդում	Սոց-աշխատող	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
5	Մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում	Համակարգող			x			x			x			x

Գործողություններ

1) *Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան՝ համաձայն ստորև ներկայացված ձևաչափի .*

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն	*Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն*
Ծրագիր	*Համայնքային Ինտեգրացված տնային խնամք և ակտիվ ծերացում*
Ժամանակահատված	*2022 հունվար – 2022 դեկտեմբեր*

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ծրագրի շահառուներ են հանդիսանում խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձինք: Շահագրգիռ կողմերն են՝ տարեցների հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունները, Տարեցների ցանցը, տեղական ինքնակառավարման մարմինները, առողջության պահպանման առաջնային օղակը:

Ռիսկերի գնահատում

Որոնք են ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը և դրանց հաղթահարման ռազմավարությունը:

Հայաստանում կորոնավիրուսային համաճարակը իրենից ռիսկ է ներկայացնում տարեց մարդկանց կյանքի և առողջության, սոցիալական և տնտեսական վիճակի առումով: Հայաստանում բռնկումը արագ էր, և արտակարգ դրությունը երկարատև էր ողջ երկրի

համար: Կորոնավիրուսային համաճարակը առաջացնում է մահացությունների և սոցիալական հետևանքների մեծ ռիսկ, որոնք ավելի ծանր են ազդում տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և քրոնիկական հիվանդություններ ունեցողների վրա:

Խնդրահարույց է տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամքի ուղեգրման գործող կարգը հետևյալ պատճառներով՝

- բժկական քարտում նշված ամբողջական հետազոտությունների իրականացումը երկարատև գործընթաց է (նեղ մասնագիտական այդ թվում՝ ֆլուրոգրաֆիկ հետազոտության փունջ), որը ներկայիս պայմաններում հանդիսանում է ռիսկ տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար, քանի որ առողջության առաջնային պահպանման օղակը քովիդ-19 համավարակի պատասխանատու օղակն է:

- անկողնային և ծանր ընթացքով հիվանդություններ ունեցող անձանց ուղեկցումը բժշկական հաստատություն (նեղ մասնագիտական խորհրդատվություն, ֆլուրոգրաֆիա) անհնարին է կամ դժվար իրականացվող:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայկական Կարմիր Խաչի ընկերություն
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Գործադիր տնօրեն՝
_____ Ա.Մուրադյան (ստորագրություն) Կ. S.	_____ Ա.Եղիազարյան (ստորագրություն) Կ. S.

Հավելված 2
2022 թ. հունվարի 28 -ին
կնքված N ԴՏՊ-1032-11002/22-ԼԱ պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Հայկական Կարմիր Խաչի ընկերություն
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Գործադիր տնօրեն՝
Ա.Մելքումյան	Ա.Եղիազարյան
(ստորագրություն) Կ. Տ.	(ստորագրություն) Կ. Տ.

Հավելված N 3
2022թ. «Հունվար» «27»
N ԴՏՊ-1032-11002/22-ԼԱ պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի----------ամսում փոփոխուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա և հաստատուն ծախսերի գծով փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

Ծախսային հոդվածներ		Հաստատված նախահաշվի գումարը		Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը	Պետական բյուջեից	Այլ միջոցներից նախատեսված	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական միջոցներ	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Այլ աղբյուրների անվանումները
1	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	x	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	***4100***									
Էներգետիկ ծառայություններ	**4212**									
Կոմունալ ծառայություններ	**4213**									
Կապի ծառայություններ	**4214**									
Ապահովագրական ծախսեր	**4215**									
Գույքի և սարքավորումների վարձակալություն	**4216**									

Հանձնեց՝
Տնօրեն՝_____ Կազմակերպություն՝_____

ՊԵՏԱԿԱՆ ԳԱՆՁԱՐՄԻՆ
Էներգետիկայի գլխավոր քարտուղար՝
_____ Ս.Մուրադյան
(ստորագրություն) Կ. Տ.

ԿԱՊԱԼԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Հայկական Կարմիր Խաչի ընկերության Գործադիր տնօրեն՝
_____ Ա.Եղիազարյան
(ստորագրություն) Կ. Տ.

Հավելված 4
2022 թ. հունվարի 27-ին
կնքված N ԴՏՊ-1032-11002/22-ԼԱ պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ հազ. դրամ

Միջոցառման																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
Լոտ 16 Լոռու մարզ Ալավերդի	99999999 /548	«Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» Լոռու մարզ Ալավերդի	341.9	683.8	1025.7	1367.6	1709.6	2051.5	2393.4	2735.3	3077.2	3419.1	3761.0	4102.920	4102.920

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է մինչև ֆինանսական միջոցների նախատեսումը, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Նախարարության գլխավոր քարտուղար՝
Ա.Սուրադյան
(ստորագրություն)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Հայկական Կարմիր Խաչի ընկերության գործադիր տնօրեն՝
Ա.Եղիազարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված 5
2022 թ. հունվար 27 -ին
կնքված N ԴՏՊ-1032-11002/22-ԼԱ պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2022 թ.

Պայմանագրի անվանումը՝ Պետության կողմից դրամաշնորհի ձևով Հայկական Կարմիր Խաչի ընկերությանը տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2022 թ.
Պայմանագրի համարը՝ N ԴՏՊ-1032-11002/22-ԼԱ
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

Իրականացված միջոցառման							
անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
		ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.
Պետական մարմին	**Կազմակերպություն**
Նախարարության գլխավոր քարտուղար	**Հայկական Կարմիր Խաչի ընկերության գործադիր տնօրեն**
_____ **Ս.Մելքումյան**	_____ Ա.Եղիազարյան
/ստորագրություն/	**/ստորագրություն/**
Կ.Տ	**Կ.Տ**

Հավելված 6

«27» հունվար 2022 թ -ին
կնքված N ԴՏՊ-1032-11002/22-ԼԱ պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«ՏԱՐԵՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ

«Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» միջոցառման հիմնական նպատակն է խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց և միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից ուղեգրված տնային պայմաններում խնամք և սոցիալական ծառայությունների տրամարդրումը:

Դրամաշնորհը տրամադրվում է Հայկական Կարմիր Խաչի ընկերությանը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամք ու սոցիալական ծառայություններ տրամադրելու նպատակով:

Դրամաշնորհի գումարը հաշվարկված է Լոռու մարզի Ալավերդի համայնքի ամսական 45 տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում սպասարկմամբ: Դրամաշնորհի ծախսման ուղղությունները տնօրինում է կազմակերպությունը՝ ըստ իր հայեցողության և ներկայացված ծրագրի: Մյուս ծախսերը հոգում է ծառայություն մատուցող կազմակերպությունը:

Ծրագրի միջոցառման/ծառայության իրականացման նկարագիր

Հ/Հ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	«Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ»	Խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամք և սոցիալական ծառայությունների տրամադրում Լոռու մարզի Ալավերդի համայնքում՝ ամսական 45 շահառուի:	Տնային պայմաններում խնամքի կարիք ունեցող 65 տարին լրացած տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց (այսուհետ՝ շահառու) մատուցվում են հետևյալ ծառայությունները՝ 1) խնամքի ծառայություններ հայցող շահառուի անհատական կարիքների գնահատում և գնահատված կարիքներին համարժեք ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում. 2) անհատական սոցիալական ծրագրի կազմում. 3)խնամքի ծառայությունների տրամադրում շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան, մասնավորապես՝ - կենցաղային սպասարկում.	1) Սոցիալական աշխատանքի իրականացում տարեկան յուրաքանչյուր շահառուին առնվազն 12 անգամ կամ եռամսյակը 3 անգամ, կատարելով համապատասխան հաշվառում՝ ըստ առանձին ծառայությունների, նշելով ծառայություն ստացած անձանց անուն, ազգանունը և ծառայությունից օգտվելու ամսաթիվը. 2) բոլոր շահառուների կարիքների գնահատում առնվազն եռամսյակը մեկ անգամ, կատարելով համապատասխան գրառում շահառուների անհատական ծրագրերում. 3) մշակութային միջոցառումների և	31.12.2022 թվական	էլեկտրոնային բովանդակային հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ (info@mlsa.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով)	4 102 920 (չորս միլիոն հարյուր երկու հազար ինը հարյուր քսան)

		Վիճակագրություն և հանրամատչելի հաշվետվություններ մշակող կառավարման համակարգի ներդրում Հանրապետության մարզերում գործող վարչական դատարանների գործերի քննության ժամկետների կրճատում՝ ապահովելով դատական պաշտպանության հասանելիության բարելավում (կամ) և **գործերի քննության ժամկետների կրճատում՝ ապահովելով դատական պաշտպանության հասանելիության բարելավում** (կամ) և **գործերի քննության ժամկետների կրճատում՝ ապահովելով դատական պաշտպանության հասանելիության բարելավում** (կամ) **2015 թվականի դեկտեմբերի 25-ի կիրառմամբ** «Դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-դեկտեմբերի 25-ի մեկնաբանությամբ, մասնավորապես դատական գործերի քննության ժամկետների կրճատման հետևանքով դատական գործերի քննության արդյունքում դատական ակտերի կայացման ժամանակահատվածի կրճատման ապահովման նպատակով

			Հանրապետության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն որոշումով, • ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 730-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի «Պետության կողմից երաշխավորված՝ պետական մարմինների ենթակայության ներքո գտնվող սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից անվճար տրամադրվող սոցիալական ծառայությունների ու սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների ցանկերը և սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության վճարովի ծառայություններից ձևավորված ֆինանսական միջոցներից սոցիալական աջակցության ֆինանսավորման դեպքերն ու	չափորոշիչից՝ կատարելով գրառումներ համապատասխան գրանցամատյանում. 5)բժշկական օգնության կազմակերպում, առաջին բուժօգնության տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:			

			կարգը սահմանելու մասին» N 1112-Ն որոշման և տեղեկանքի ձևերի հաստատելու մասին հրաման ստորագրելու իրավասություն ունեցող անձանց:	

Ստորագրի կիսամյակ

Հոդված բյուր տարբեր տարբերակներով ցուցակներ հաստատելու և ներկայացնելու վերաբերյալ

Հոդված 3.Ուսանողական նպաստի հատկացման վերաբերյալ հանձնարարությունը վերանայման ենթակա է յուրաքանչյուր կիսամյակի սկզբում՝ ելնելով ուսանողական նպաստի ստացման իրավունքի ունեցող անձանց թվաքանակից, նրանց ընտանիքի եկամուտների չափից, ինչպես նաև տրամադրվող հանձնարարությունների ընդհանուր գումարի չափից: Ուսանողական նպաստի հատկացման հանձնարարությունը վերանայվում է յուրաքանչյուր կիսամյակ՝ հետևելով ուսանողական նպաստի հատկացման հանձնարարությունների ներկայացման ամսաթվերին, ըստ նեղիմայացված ցուցակների՝ հանձնարարելով տարածքային սոցիալական ծառայություններին վերանայման արդյունքների հաշվետվությունը ներկայացնել մինչև հաջորդ կիսամյակի սկիզբը:

Հոդված 4.Ուսանողական նպաստի հատկացման հանձնարարությունը վերանայվում է ամսեկան հիման վրա՝ հետևելով ուսանողական նպաստի հատկացման հանձնարարությունների ներկայացման ամսաթվերին, ինչպես նաև տրամադրվել կարող է ամսական 75%-ից ոչ ավելի գումարի չափով:

Ստորագրի կիսամյակ

Տեղեկանքի և սոցիալական խորհրդի նախագահ՝

դիմումի մասին

<< աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Նախարարության վերակազմակերպման գլխավոր քարտուղար՝

(ստորագրություն)

Ա. Ս.

Ստորագրի նշումներ՝

<աշխատանքի հաշվի ընդունման դիմումի հաշվի ընդունման ամսաթիվ>

(ստորագրություն)

Ա. Ս.